

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

1

Սողոմոնի երգերուն երգը.—

ՍԻՐՈՒՇԻՆ

- 2 “Համբուրէ՛ գիս քու բերանիդ համբոյրներով”,
Որովհետեւ քու տարփանքդ գինիէն անելի լաւ է,
- 3 Զու՛ր հոտաւէտ իւղերուդ բուրմունքէն **անելի ախորժելի:**
Զու անունդ թափուած **հոտաւէտ** իւղի պէս է,
Հետեւաբար օրհորդները քեզ կը սիրեն:
- 4 Զաշէ՛ գիս քու ետեւէդ. վազե՛նք:
Թագաւորը գիս տարաւ իր ներքին սենեակները.
Խայտա՛նք եւ ուրախանա՛նք քեզի հետ,
Ներբողե՛նք քու տարփանքդ գինիէն անելի.
“Իրաւունք ունին քեզ սիրելու”:
- 5 Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ,
Ես ⁷սեւցած եմ, բայց՝ ^եգեղեցիկ,
Կեդարի վրաններուն պէս,
Սողոմոնի վարագոյրներուն պէս:
- 6 Մի՛ նայիք ինծի՝ սեւաթոյր ըլլալուս համար,
Որովհետեւ արե՛ւը գիս թխացուց.
Իմ մօրս որդիները ինծի դէմ բորբոքեցան,
Զիս այգիներու պահապան նշանակեցին,
Բայց իմ այգիս չպահպանեցի:
7 Իմացո՛ւր ինծի, ո՛վ անձիս սիրածը,
Զու հօտդ ո՞ւր կ’արածես.
Կէսօրին ո՞ւր կը պառկեցնես.
Զու ընկերակիցներուդ հօտերուն քով
Ինչո՞ւ ⁹մոլորածի պէս ըլլամ:

ՍԻՐԱԿԱՆԸ

- 8 Եթէ դուն չես գիտեր, ո՛վ կիներուն գեղեցկագոյնը,
^եԳնա՛ հօտերուն հետքերէն

- ^ա Եբբ.՝ Իր բերանին համբոյրներով թող համբուրէ գիս
- ^բ Եբբ.՝ լաւորակ
- ^գ Եբբ.՝ Զեզ ուղղամտութեամբ կը սիրեն
- ^դ Եբբ.՝ սեւ
- ^ե Եբբ.՝ վայելուչ
- ^զ Կամ՝ ծածկուած կնոջ
- ^է Եբբ.՝ դո՛ւրս ելիր

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Եւ արածէ՛ ուկերդ հովիւներուն վրաններուն քով:

9 Փարաւոնի կառքերուն լծուած զամբիկի մը նմանցուցի քեզ, ո՛վ իմ սիրուհիս:

10 Զու այտերդ գեղեցիկ են զարդեղէններով,
Եւ վիզդ՝ քայռամանեակներով:

11 Զեզի ոսկիէ զարդեղէններ պիտի շինենք՝
Արծաթէ կիտուածներով:

ՍԻՐՈՒՂԻՆ

12 Մինչ թագաւորը սեղանն է,
Իմ նարդոսս իր բուրմունքը ^Բկ'արծակէ՞:

13 Իմ սիրականս ինծի զմուռսի ծրարի պէս է.
^ԲԳիշերը պիտի հանգչի՞ իմ ^Օստինքներուս միջեւ:

14 Իմ սիրականս ինծի համար հինայի ողկոյզ մըն է՝
Ենգադդիի այգիներուն մէջ:

ՍԻՐԱԿԱՆԸ

15 Ահա՛ գեղեցիկ ես, ո՛վ իմ սիրուհիս.

Ահա՛ գեղեցիկ ես, քու աչքերդ աղաւնիներու **նման** են:

ՍԻՐՈՒՂԻՆ

16 Ո՛վ իմ սիրականս, ահա՛ գեղեցիկ ես ու հաճելի,
Եւ մեր մահիճը կանաչազարդ է:

17 Մեր տուններուն գերանները մայրիի **փայտէ** են,
Ու մեր առիքները՝ եղեւնափայտէ:

2

Ես Սարոնի նարկիսն եմ,
Ու հովիտներուն շուշանը:

ՍԻՐԱԿԱՆԸ

2 Ինչպէս է շուշանը ^Մմոշենիներուն մէջ,
Այնպէս է իմ սիրուհիս աղջիկներուն մէջ:

ՍԻՐՈՒՂԻՆ

3 Ինչպէս է խնձորենին անտառի ծառերուն մէջ,
Այնպէս է իմ սիրականս ^Բերիտասարդներուն մէջ.

^Բ Եբբ.՝ կու տայ

^Բ Եբբ.՝ Պիտի գիշերէ

^Ժ Եբբ.՝ ծիծերուս

^Մ Փշոտ թուփ մը

^Բ Եբբ.՝ որդիներուն

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Անոր հովանիին տակ՝ Գանկալի է նստիլ՝,

Եւ անոր պտուղը քաղցր է իմ քիմքիս:

4 Ջիս Դիւնճոյքին տունը տարաւ.,

Ու վրաս իր սիրոյ դրօշը **պարգեց**:

5 Նեցո՛ւկ եղէք ինձի չամիչով կարկանդակներով,

Ուժովցուցէ՛ք զիս խնճորներով,

Որովհետեւ ես սիրով հիւանդ եմ:

6 Անոր ձախ ձեռքը իմ գլուխիս տակ ըլլայ,

Եւ աջ ձեռքը զիս գրկէ:

ՍԻՐԱԿԱՆԸ

7 Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ,

Ձեզ այժեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երդմնեցնեմ,

Որ Եսիրուհիս չսթափեցնէք եւ չարթնցնէք,

Մինչեւ որ ինք փափաքի:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

ՍԻՐՈՒՂԻՆ

8 Իմ սիրականիս ձայնն է.

Ահա՛ ան կու գայ՝ լեռներուն վրայէն ոստոստելով,

Ու բլուրներուն վրայէն ցատկոտելով.

9 Իմ սիրականս այժեամի կամ եղնիկի ձագի կը նմանի:

Ահա՛ հիմա մեր պատին ետեւը կայնած է,

Պատուհաններէն կը նայի,

Վանդակներէն կ'երեւնայ:

10 Իմ սիրականս պատասխանելով ինձի ըսաւ.

(ՍԻՐԱԿԱՆԸ)

«Կանգնէ՛, իմ սիրուհիս, իմ գեղեցիկս, ու եկո՛ւր.

11 Որովհետեւ ահա՛ ձմեռը անցաւ,

Տեղատարափները անցան գացին:

12 Գետինին վրայ ծաղիկներ կ'երեւնան,

Գոյլալի ատենը հասաւ,

Ու մեր երկրին մէջ տատրակին ձայնը կը լսուի:

13 **Ահա՛** թզենին իր խակ թուզերը կը հասունցնէ,

Եւ ծաղկած որթատունկերը **իրենց** բուրմունքը կ'արձակեն:

^Գ Եբբ.՝ ցանկալով նստայ

^Դ Եբբ.՝ գինիին

^Ե Եբբ.՝ սէրը

^Զ Եբբ.՝ սաղմոսերգութեան

^Է Եբբ.՝ կու տան

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Կանգնէ՛, իմ սիրուհիս, իմ գեղեցիկս, ու եկո՛ւր:

- 14 Ո՛վ իմ աղանհիս, որ կը կենաս ժայռի խորշերուն մէջ,
Յից ժայռին ծածկոյթին տակ,
Ը՛ղէ՛մքդ ցուցուր ինձի, ձա՛յնդ լսել տուր ինձի,
Որովհետեւ ձայնդ քաղցր է, ու դէմքդ՝^բգեղեցիկ»:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

- 15 Բռնեցէ՛ք մեզի աղուէսները,
Այգիները փճացնող պզտիկ աղուէսները,
Զանի մեր այգիները ծաղկած են:

ՍԻՐՈՒՂԻՆ

- 16 Իմ սիրականս իմս է, ու ես անո՛րն եմ:
Ան իր հօտը շուշաններու մէջ կ'արածէ:
17 Դեռ օրը չգովացած եւ ստուերները^գ չհեռացած՝
Վերադարձի՛ր, ո՛վ իմ սիրականս,
Ու նմանէ՛ Բեթերի լեռներուն վրայի այծեամից
Կամ եղնիկներու ձագից:

(ՍԻՐՈՒՂԻՆ)

3

- Իմ անձիս սիրածը փնտռեցի
Գիշերը՝ անկողինիս մէջ.
Զայն փնտռեցի, բայց չգտայ:
- 2 Հիմա կանգնիմ, շրջիմ քաղաքին մէջ,
Փողոցներուն ու հրապարակներուն մէջ
Իմ անձիս սիրածը փնտռեմ.
Զայն փնտռեցի, բայց չգտայ:
- 3 Զաղաքին մէջ շրջող պահապանները զիս գտան, որոնց ըսի.
«Արդեօք իմ անձիս սիրածը տեսա՞ք»:
- 4 Հազիւ անոնցմէ՝^ա հեռանալով՝
Իմ անձիս սիրածը գտայ:
Զայն բռնեցի ու չթողուցի՝
Մինչեւ որ իմ մօրս տունը տարի,
Զիս ծնանողին ներքին սենեակը:

ՍԻՐԱԿԱՆԸ

- 5 Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ,

^բ Եբբ.՝ Տե՛սքդ

^բ Եբբ.՝ վայելուչ

^գ Եբբ.՝ չփախած

^ա Եբբ.՝ հեռու անցնելով

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Ձեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երդմնեցնեմ,
Որ^բ սիրուհիս չսթափեցնէք եւ չարթնցնէք՝
Մինչեւ որ ինք փափաքի:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

6 Ո՞վ է ասիկա՝ որ անապատէն կը բարձրանայ
Ծուխի սիւներու պէս,
Ջմուռսով եւ կնդրուկով բուրուած,
Նաեւ վաճառականներու ամէն տեսակ փոշիներով:

ՍԻՐՈՒՂԻՆ

- 7 Ահա՛ Սողոմոնի^գ Գահոյքը,
Որուն շուրջը Իսրայէլի գօրաւորներէն
Վաթսուն գօրաւոր կայ:
- 8 Բոլորն ալ սուսերաւոր
Ու պատերազմի վարժուած են:
Գիշերուան երկիւղին համար՝
Իւրաքանչիւրին սուրը իր ազդրին վրայ է:
- 9 Սողոմոն թագաւորը Լիբանանի փայտէն
Գահաւորակ մը շինեց իրեն համար:
- 10 Անոր սիւները արծաթէ շինեց, յենարանը՝ ոսկիէ,
Բազմոցը՝^դ ծիրանիէ.
Անոր մէջտեղի բանուածքը՝
Երուսաղէմի աղջիկներուն սիրոյ գործն էր:
- 11 Ո՞վ Սիոնի աղջիկներ, դո՛ւրս ելէք
Եւ նայեցէ՛ք Սողոմոն թագաւորին,
Այն թագով՝ որով իր մայրը զինք^ե պսակեց իր փեսայութեան օրը,
Իր սիրտին ուրախութեան օրը:

ՍԻՐԱԿԱՆԸ

4

Ահա՛ գեղեցիկ ես, ո՞վ իմ սիրուհիս,
Ահա՛ գեղեցիկ ես:
Լաչակիդ մէջէն քու աչքերդ աղաւնիներու նման են.
Մազերդ Գաղաադ^ա շլեռը պառկող՝ այծերու հօտին պէս են:

^բ Եբբ.՝ սէրը

^գ Կամ՝ մահիճը

^դ Այսինքն՝ ծիրանիով ներկուած կերպասէ

^ե Եբբ.՝ թագադրեց

- 2 Ակռաներդ լուսցարանէն բարձրացող խուզուած **մաքիներու** հօտի պէս են,
Որոնք՝ բոլորն ալ՝ երկուորեակ կը ծնանին,
Եւ անոնցմէ ո՛չ մէկը ամուլ է:
- 3 Շրթունքդ կրկնակի կարմիր դերձանի պէս է,
Ու խօսուածքդ ^բգեղեցիկ է:
Թուշերդ լաչակիդ մէջէն՝
Նուռի շերտերու պէս են:
- 4 Վիզդ զինարանի համար կառուցանուած
Դաւիթի աշտարակին պէս է,
Ուր հազար ասպար կախուած է.
Բոլորն ալ գօրաւորներու վահաններ են:
- 5 Երկու ^գստինքներից նման են երկու ձագերու,
Այծեամի մը երկուորեակներուն,
Որոնք շուշաններու մէջ կ'արածին:
- 6 Դեռ օրը չզոնվացած եւ ստուերները ^դչհեռացած՝
Ես զմուռսի լեռն ու կնդրուկի բլուրը պիտի երթամ:
- 7 Բոլորովին գեղեցիկ ես, **ո՛վ** իմ սիրուհիս,
Եւ քու վրայ արատ չկայ:
- 8 **Ո՛վ իմ** հարսս, **Եկո՛ւր** ինձի հետ Լիբանանէն,
Եկո՛ւր Լիբանանէն ինձի հետ.
Նայէ՛ Ամանայի գագաթէն, Սանիրի ու Շերմոնի գագաթէն,
Առիւծներու որջերէն, ինձերու լեռներէն:
- 9 Սիրտս գրաւեցիր, **ո՛վ** իմ հարս քոյրս.
Սիրտս գրաւեցիր քու մէկ ^ենայուածքովդ
Եւ վիզիդ մէկ մանեակով:
- 10 Զու տարփանքդ ի՛նչ գեղեցիկ է, **ո՛վ** հարս քոյրս.
Զու տարփանքդ գինիէն աւելի լաւ է,
Եւ քու **հոտաւէտ** իւղերուդ բուրմունքը՝
Բոլոր բուրաւէտ **համեմներէն**:
- 11 Շրթունքէդ մեղրախորիսխ կը կաթի, **ո՛վ իմ** հարսս,
Լեզուիդ տակ մեղր ու կաթ կայ.
Զու հանդերձներուդ բուրմունքը
Լիբանանի բուրմունքին պէս է:
- 12 Իմ հարս քոյրս կղպուած պարտէզ մըն է,
Կղպուած ^զջուրի աղբիւր՝ **ու** կնքուած աղբերակ:
- 13 Զու ծառատունկերդ նռնենիներու մրգաստան են՝

^ա Կամ՝ լեռնէն երեւցող

^բ Եբբ.՝ վայելուչ

^գ Եբբ.՝ ծիծերդ

^դ Եբբ.՝ չփախած

^ե Եբբ.՝ աչքովդ

^զ Կամ՝ ջրակոյտ

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

- Քաղցրահամ պտուղներով, հինայով ու նարդոսով,
14 Նարդոսով եւ քրքումով, խունկեղէգով ու կինամոնով,
Ամէն տեսակ կնդրուկի ծառով, զմուռսով ու հալուէով,
Եւ բոլոր գլխաւոր բուրաւէտ **համեմներով**։
- 15 Պարտէզներու աղբիւր **ես**,
Կենարար ջուրերու ջրհոր՝
Որոնք Լիբանանէն կը հոսին։

ՍԻՐՈՒՇԻՆ

- 16 Արթնցի՛ր, ո՛վ հիւսիս. եկո՛ւր, ո՛վ հարաւ.
Փչեցէ՛ք պարտէզիս մէջ, որպէսզի անոր բուրաւէտ **համեմները**՝ բուրեմն։
Իմ սիրականս թող գայ իր պարտէզը
Եւ ուտէ իր քաղցրահամ պտուղները։

ՍԻՐԱԿԱՆԸ

5

Իմ պարտէզս եկայ, ո՛վ հարս քոյրս.
Իմ զմուռսս բուրաւէտ **համեմներուս** հետ ժողվեցի,
Իմ խորիսխս մեղրիս հետ կերայ,
Իմ գինիս կաթովս խմեցի։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Կերէ՛ք, ո՛վ բարեկամներ.
Խմեցէ՛ք ու գինովցէ՛ք, ո՛վ սիրելիներ։

ՉՈՐՈՐԴ ԵՐԳ

ՍԻՐՈՒՇԻՆ

- 2 Ես կը քնանայի, բայց սիրտս արթուն էր։
Ահա՛ իմ սիրականիս ծայնն է. **դուռը** կը զարնէ ու կ'ըսէ.

(ՍԻՐԱԿԱՆԸ)

«Ո՛վ իմ քոյրս, իմ սիրուհիս,
Իմ աղաւնիս, իմ կատարեալս, բա՛ց ինձի.
Քանի որ գլուխս ցօղով լեցուած է,
Ու գանգուրներս՝ գիշերուան կաթիլներով»։

(ՍԻՐՈՒՇԻՆ)

- 3 «Իմ պատմունճանս հաներ եմ,
Ջայն ի՞նչպէս հագնիմ.
Ոտքերս լուացեր եմ,
Ջանոնք ի՞նչպէս աղտոտեմ»։
- 4 Իմ սիրականս ձեռքը **դրան** ծակէն երկարեց,
Ուստի իրեն համար ընդերքս ալեկոծեցաւ։

^է Եբբ.՝ հոսիմ

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

- 5 Կանգնեցայ՝ որ սիրականիս բանամ **դուռը**.
Ձեռքերէս զմուռս կաթեցաւ, ու մատներէս զմուռս ^ահոսեցաւ
Կղպանքին ^բբռնակին վրայ:
- 6 Իմ սիրականիս բացի,
Բայց սիրականս քաշուեր ^գգացեր էր:
Մինչ ինք կը խօսէր, իմ անձս ^դնուաղեցաւ.
Ջինք փնտռեցի, բայց չգտայ.
Ջինք կանչեցի, բայց ինծի չպատասխանեց:
- 7 Զաղաքին մէջ շրջող պահապանները զիս գտան,
Զարկին ինծի **ու** վիրաւորեցին զիս.
Պարիսպին պահապանները քօղս վրայէս հանեցին:
- 8 Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնեցնեմ,
Եթէ իմ սիրականս գտնէք՝
Անոր իմացուցէք թէ ես սիրով հիւանդ եմ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

- 9 Ո՛վ կիներուն գեղեցկագոյնը,
Զու սիրականդ **ուրիշ** սիրականէ անելի ի՞նչ ունի:
Զու սիրականդ **ուրիշ** սիրականէ անելի ի՞նչ ունի,
Որ մեզ այդպէս կ'երդմնեցնես:

ՍԻՐՈՒՇԻՆ

- 10 Իմ սիրականս սպիտակաթոյր ու շէկ է,
Ե՛նշանաւոր՝ տասը հազարի մէջ:
11 Անոր գլուխը ^գշատ զուտ ոսկի է.
Գանգուրները կը ծածանին, **եւ** ագռաւի պէս սեւ են:
12 Աչքերը աղանիներու պէս են՝ ջուրի վտակներու քով,
Կաթով լուացուած,
Ե՛լաւ ագուցանուած **գոհարներու** պէս՝:
13 Անոր այտերը բուրաւէտ **համեմներու** ածուիւն պէս են,
Ե՛շոտաւէտ ծաղիկներու թաղարներուն՝ պէս.
Շրթունքը ^բհոսուն զմուռս կաթեցնող շուշան է:

^ա Եբբ.՝ անցաւ

^բ Այսինքն՝ բռնելու տեղին

^գ Եբբ.՝ անդին անցեր

^դ Կամ՝ դուրս ելաւ

^ե Եբբ.՝ Դրօշակիր

^զ Եբբ.՝ մաքուր

^է Կամ՝ Առատութեան մէջ կեցող

^բ Եբբ.՝ Օծանելիքներու աշտարակներուն

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

- 14 Ձեռքերը ոսկի ապարանջաններ են՝
՝Ոսկեքարերով ազուցանուած.
ԻՓորը յղկուած փղոսկր է՝
Շափիւղաներով ծածկուած:
- 15 Սրունքները մարմարէ սիւներ են՝
Ջուտ ոսկիէ խարիսխներու վրայ հաստատուած:
Տեսքը Լիբանանի պէս է,
Մայրիներուն պէս ընտիր:
- 16 Անոր քիմքը՝ քաղցր է,
Եւ ինք՝ ամբողջ **էութեամբ** ցանկալի:
Ա՛յսպէս է իմ սիրականս, ա՛յսպէս է իմ բարեկամս,
Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

6

Քու սիրականդ ո՞ւր գնաց,
Ո՛վ կիներուն գեղեցկագոյնը.
Քու սիրականդ ո՞ր **կողմը** դարձաւ,
Որ գայն քեզի հետ փնտռենք:

ՍԻՐՈՒՂԻՆ

- 2 Իմ սիրականս իր պարտէզը իջաւ՝
Բուրաւէտ **համեմներու** ածուններուն քով,
Որպէսզի պարտէզներու մէջ **իր հօտը** արածէ
Ու շուշաններ ժողվէ:
- 3 Ես իմ սիրականիսն եմ,
Եւ իմ սիրականս իմն է.
Ան **իր հօտը** շուշաններու մէջ կ'արածէ:

ՂԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

ՍԻՐԱԿԱՆԸ

- 4 Թերսայի պէս գեղեցիկ ես, ո՛վ իմ սիրուհիս.
Երուսաղէմի պէս վայելուչ ես,
Ու դրօշակիր **գօրքերու** պէս ահարկու:
- 5 Դարձո՛ւր ինձմէ քու աչքերդ,
Որովհետեւ անոնք զիս կը նուաճեն:
Մազերդ «Գաղաադ պառկող» այծերու հօտին պէս են:

^բ Եբբ.՝ անցնող

^ժ Եբբ.՝ Թարսիսի քարերով

^ի Եբբ.՝ Ընդերքը

^լ Եբբ.՝ քաղցրութեամբ **լեցուն**

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

- 6 Ակռաներդ լուացարանէն բարձրացող մաքիներու հօտին կը նմանին,
Որոնք՝ բոլորն ալ՝ երկուորեակ կը ծնանին,
Եւ անոնցմէ ո՛չ մէկը ամուլ է:
- 7 Թուշերդ լաջակիդ մէջէն՝
Նուռի շերտերու պէս են:
- 8 Թագուհիները վաթսուն հատ են, հարճերը՝ ութսուն,
Իսկ օրիորդները՝ անթիւ.
- 9 Իմ աղանիս, իմ կատարեալս՝ մէկ հատիկ է,
Իր մօր մէկ հատիկը,
Զինք ծնանողին ^բընտրեալը:
Աղջիկները զայն տեսան
Եւ զինք երանելի կոչեցին.
Թագուհիներն ու հարճերն ալ
Զայն գովեցին:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

- 10 Ո՛վ է ասիկա՝ որ արշալոյսի պէս կը նայի,
Լուսինի պէս գեղեցիկ է, արեւի պէս՝ վճիտ,
Ու դրօշակիր **գօրքերու** պէս ահարկու:

ՍԻՐՈՒՇԻՆ

- 11 Ընկուզենիներու պարտէզը իջայ,
Որպէսզի ձորին «դալար **վիճակը**» տեսնեմ,
Եւ նայիմ թէ արդեօք որթատունկը կը բողբոջի՝
Ու նռնենիները կ'ընծիւղի՛ն:
- 12 Առանց իմ գիտնալուս՝ անձս զիս Ամինադաբի կառքերուն պէս ըրաւ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

- 13 Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, ո՛վ Սողոմացի,
Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, որպէսզի քեզ տեսնենք:

ՍԻՐԱԿԱՆԸ

Ի՞նչ պիտի տեսնէք Սողոմացիին վրայ.
Իբր թէ երկու ^դխումբերու պա՛րը:

7

Ի՞նչ գեղեցիկ են ոտքերդ **քու** կօշիկներուդ մէջ,
Ո՛վ ազնուականի աղջիկ.

^ա Կամ՝ Գաղաադէն երեւցող

^բ Կամ՝ վճիտը

^գ Կամ՝ պտուղները

^դ Կամ՝ բանակներու

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

- Ազդրերուդ շրջագիծը մանեակներու պէս է՝
Բանուած արուեստագէտի մը ձեռքով:
- 2 Պորտդ բոլորածեւ բաժակ մըն է՝ «խմիչքով լեցուն»,
Փորդ՝ շուշանով շրջպատուած ցորենի դէզ:
- 3 Երկու ^բստինքներդ նման են երկու ձագերու,
Այծեամի մը երկուորեակներուն:
- 4 Վիզդ փղոսկրէ աշտարակի պէս է.
Աչքերդ **կը նմանից** Եսերոնի լճակներուն՝
Բաթրաբբիմի դրան քով.
Քիթդ Լիբանանի աշտարակին պէս է,
Որ դէպի Դամասկոս կը նայի:
- 5 Գլուխդ քու վրայդ Կարմեղոսի պէս է,
Եւ գլուխիդ մազափունջը՝ ^գծիրանիի պէս.
Թագաւորը **քու** խոպոպներէդ ^դգերուած է:
- 6 Ո՛րչափ գեղեցիկ ու ո՛րչափ հաճելի ես,
Իմ քնքուշ ^եսիրունհիս:
- 7 Զու հասակդ արմաւենիի կը նմանի,
Եւ ստինքներդ՝ ողկոյզներու:
- 8 Ըսի. «Արմաւենիին վրայ ելլեմ,
Անոր ոստերը բռնեմ»:
^զՍտինքներդ որթատունկի ողկոյզներուն պէս թող ըլլան,
Ռունգերուդ բուրմունքը՝ խնձորներու **հոտից** պէս,
- 9 Եւ քիմքդ՝ լաւագոյն գինիին պէս,

ՍԻՐՈՒՇԻՆ

- Որ ուղիդ ^ակը հոսի՝ իմ սիրականիս համար,
Ու քնացողներուն շրթունքներուն ^բվրայ կը կաթի՝:
- 10 Ես իմ սիրականիսն եմ
Եւ ան ինծի կը բաղձայ:
- 11 Եկո՛ւր, իմ սիրականս, դո՛ւրս ելլենք՝ դէպի դաշտը,
Գիւղերո՛ւ մէջ գիշերենք.
- 12 **Առտուն** կանո՛ւխ ելլենք, այգիները **երթանք**,

^ա Եբբ.՝ ուր խառնուրդը չի պակսիր

^բ Եբբ.՝ ծիծերդ

^գ Այսինքն՝ ծիրանիով ներկուած կերպասի

^դ Եբբ.՝ կապուած

^ե Եբբ.՝ սէրս

^զ Եբբ.՝ Ծիծերդ

^է Եբբ.՝ կ'երթայ

^ը Եբբ.՝ խօսիլ կու տայ

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Ու տեսնե՛նք թէ արդեօք որթատունկը կը բողբոջի՛, ծաղիկը կը բացուի՛,
Եւ նոնենհիները կ'ընծիւղի՛ն:

Հո՛ն իմ տարփանքս քեզի պիտի տամ:

13 Մանրագորները **իրենց** բուրմունքը **Քկ'արծակեն**^բ,

Ու մեր դռներուն մէջ կան

Բոլոր քաղցրահամ պտուղները, թէ՛ նոր եւ թէ՛ հին:

Քեզի՛ վերապահած եմ **զանոնք**, ո՛վ իմ սիրականս:

8

Երանի՛ թէ մօրս ^աստիները ծծած եղբօրս պէս ըլլայիր:

Երբ քեզ դուրսը գտնէի՝ պիտի համբուրէի,

Ու զիս պիտի չարհամարհէին:

2 Քեզ առաջնորդելով մօրս տունը պիտի տանէի,

Որպէսզի ինծի ^բսորվեցնես:

Քեզի պիտի խմցնէի ^գհոտաւէտ գինիէն, նուռերուս օշարակէն:

3 Չախ ձեռքը գլուխիս տակ պիտի ըլլար,

Եւ աջ ձեռքը զիս պիտի գրկէր:

ՍԻՐԱԿԱՆԸ

4 Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնեցնեմ,

Որ ^դսիրունիս չսթափեցնէք եւ չարթնցնէք,

Մինչեւ որ ինք փափաքի:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

5 Ո՞վ է ասիկա՝ որ անապատէն կը բարձրանայ,

Իր սիրականին կռթնած:

ՍԻՐՈՒՇԻՆ

Քեզ խնձորենիին տակ արթնցուցի:

Հո՛ն քու մայրդ երկունքի ցաւ քաշեց քեզի համար,

Հո՛ն քեզ ծնանողը երկունքի ցաւ քաշեց քեզի համար:

6 Դի՛ր զիս քու սիրտիդ վրայ կնիքի պէս,

Քու բազուկիդ վրայ՝ կնիքի պէս:

Արդարեւ սէրը մահուան պէս զօրեղ է,

Ու նախանձախնդրութիւնը՝ ^եդժոխքին պէս **անգութ**:

^բ Երբ.՝ կու տամ

^ա Երբ.՝ ծիծը

^բ Կամ՝ սորվեցնէր

^գ Երբ.՝ բաղադրեալ

^դ Երբ.՝ սէրը

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Անոր կայծերը սաստիկ բոցավառ կրակի կայծեր են:

- 7 Յորդառատ ջուրերը չեն կրնար սէրը մարել,
Ու գետերը զայն չեն ընկղմեր.
Եթէ մարդ մը սիրոյ փոխարէն տայ իր տան ամբողջ ստացուածքը,
Զինք բոլորովին կ'արհամարհեն:

ՍԻՐՈՒՂԻՆ ԵՂԱՅՐՆԵՐԸ

- 8 Պգտիկ քոյր մը ունինք՝
Որ Գստինք չունի.
Մեր քրոջ ի՞նչ ընենք
Իր մասին խօսուած օրը:
- 9 Եթէ ան պարիսպ է,
Վրան արծաթէ՝ աշտարակ մը կառուցանենք.
Իսկ եթէ դուռ է,
Զայն մայրիի **փայտի** տախտակներով ^բփակենք:

ՍԻՐՈՒՂԻՆ

- 10 Ես պարիսպ եմ,
Եւ ^բստինքներս աշտարակներ են.
Ուստի անոր ^գառջեւ
Խաղաղութիւն ^հգտնողի պէս եղայ:

ՍԻՐԱԿԱՆԸ

- 11 Սողոմոն Բահաղ-Ամոնի մէջ այգի ուներ.
Այգին պահապաններու յանձնեց,
Իւրաքանչիւրը անոր պտուղին համար հազար **կտոր** արծաթ՝ վճարելու էր:
- 12 Իմ այգիս՝ որ իմս է՝ ^իե՛ս կը պահպանեմ՝.
Հազարը քուկդ ըլլայ, ո՛վ Սողոմոն,
Ու երկու հարիւրը՝ անոր պտուղը պահպանողներուն:
- 13 Ո՛վ պարտէզներու մէջ նստող,

^Կ Այսինքն՝ մեռած անձերու կայանին

^գ Եբր.՝ ծիծ

^Կ Կամ՝ որմնածակ

^բ Եբր.՝ փաթթենք

^բ Եբր.՝ ծիծերս

^գ Եբր.՝ աչքերուն

^ի Կամ՝ բերողի

^լ Եբր.՝ բերելու, կամ՝ մտցնելու

^ի Եբր.՝ իմ առջեւ է

ԵՐԳԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Ընկերակիցները քու ձայնիդ ուշադիր են.
Ինձի՛ ալ գայն լսել տուր:

ՍԻՐՈՒՇԻՆ

14 Փախի՛ր, ո՛վ իմ սիրականս.
Նմանէ՛ այծեամին կամ եղնիկներու ձագի՛ն՝
Բուրաւէտ համեմներու լեռներուն վրայ: